

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՆԻ ԲՆԱՍԵՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱՑԱՆ

Ա. ԿՈԹՈՂՅԱՆ

ՊԱՏԱՆԻ ՄԵՂՎԱԲՈՒՅԾ



ԵՐԵՎԱՆ — 1949

638.1

14678

4-63

Կոթողյան Ա.

Կոթողյան

Զրի


087.1:638.1

4-63

Ա. ԿՈՒԹՈՂՅԱՆ

ԱՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

Պ Ա Տ Ա Ն Ի
Մ Ե Ղ Վ Ա Բ Ո Ւ Յ Ծ



11-678

19389

Ա. КОТОГЯН.
ЮНЫЙ ПЧЕЛОВОД
(На армянском языке)
Ереван, 1949 г.

ՄԵԴՈՒՆԵՐԻ ԿՅՍԱՆՔՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԿԵՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Սիրելի պատանիներ, իմ այս փոքրիկ գրվածքով կաշխատեմ ձեզ ծանոթացնել մեղվի բնատանիքի համայնական կյանքին, նրա կազմի և կատարած աշխատանքների հետ, որպեսզի դուք տեսներ, թե ինչպես այդ փոքրիկ միջատները (մեղուները) իրենց ժրաջան աշխատանքով ծաղկից-ծաղիկ թռչելով, հավաքում ու պտտրաստում են այն քաղցր, բոլորից համար սիրելի մեղրը:

Ամեն մի զարոցական, պտտանի բնասեր պետք է շատ հոգատար լինի դեպի մեղուն, օգնի իր ծնողին և կոլխողի մեղվարուծական ֆերմային, որպեսզի նրանք իրենց մեղուներին խնամեն այնպես, որ տարեց-տարի աճեն, բազմանան ու մեր աշխատավոր ժողովրդին տան առատ, սննդարար և քաղցր մեղր ու մոմ, որն օգտագործվում է մեր արդյունաբերության մեջ:



Նկ. 1

Մայր, աշխատավոր և բոռ մեղուներ

Նրա նշանակությունը մեծ է նաև խոտաբույսերի, պտղատու ծառերի, բանջարեղենի և դեղաբույսերի բերքաավաստության բարձրաց.

ման գործում, գրանից փոշտածը կատարվում է մեղսւնեւրի միջոցով:

Մեղվի ԸՆՏԱՆԻՔԸ.— Մեղսւնեւրն ապրում են բնատնիքներով. նրանց բնատնիքը բաղկացած է 3 տեսակի մեղսւնեւրից՝ մաշշ, աշխատավոր մեղսւն և բոռ:

Սբանք ապրում և աշխատում են միասին, որպէս մի բնատնիք: Անհատ մեղսւն առանց բնատնիքի ոչ մի նշանակւոյթուն չունի. նա ինքնուրույն ապրել և օգուտ տալ չի կարող:

Մեղվի նորմալ բնատնիքն ունենում է մեկ մաշշ, որն բնատնիքում կատարում է միմիայն բաղմացման պարտականոյթունը, աշխինքն դնում է ձվեր, որոնցից առաջանում են նոր մեղսւնեւր: Մաշշ մեղսւն ապրում է 3—5 տարի, բայց նրա ձվադրման ամենատառտ շրջանն առաջին և երկրորդ տարիներն են. զրա համար էլ առաջարկվում է մեղվի նորմալ բնատնիքում մօրը 2 տարուց ավելի շօղատգործել (բացառւոյթամբ ռեկորդային մայրերից):

Մեղվի բնատնիքում լինում են 10—60 հազար աշխատավոր մեղսւնեւր (նախած տարվա ժամանակին), սրանք հանգիստանում են բնատնիքի հիմնական անդամները, որոնք կատարում են տարրեք տեսակի աշխատանքներ՝ խնամում, կերակրում, տաքացնում են մաշշ մեղվի զրած ձվերը և նրանցից դուրս եկած թրթուրներին, գաշտից բնատնիք են տեղափոխում նեկտար, ծաղկեփաշի և ջուր. նեկտարը վերամշակում և դարձնում են մեղր, արտադրում են մօմ, գործում բջիջներ և զրանցից կառուցում մեղրահացեր, պահպանում են իրենց բունն արտաքին յշնամիներից և վնասատուներից, փոխակում բնազգարար կարգավորում են ջերմաստիճանը (եթե ցարտ է տաքացնում, իսկ եթե տաք է՝ հովացնում են), մօքրում են փոխակը կեղաից և այլն:

Աշխատավոր բնատնիքում ամեն մի մեղսւն ունի իր աշխատանքը. կամ պարտականոյթունը. նրանք անգործ մնալ չեն սիրում, ծուլելը նրանց մեջ տեղ չունեն:

Աշխատավոր մեղվի կյանքը շատ կարճ է: Նա զարնան և ամռան ամիսներին ապրում է 30—90 օր, նախած աշխատանքի բեռնովածուլյան և ծանրության: Աշխատավոր մեղսւնեւրը փեթակում բաժանվում են հիմնականում երկու խմբի. 1—15 օրեկան մեղսւնեւր, սրանք զրաղվում են փեթակի ներսի աշխատանքներով, իսկ 15 օրեկանից բարձր աշխատավոր մեղսւնեւրն զրաղվում են դրսի աշ


խոտանքներով: Նրանք դաշտից բերում են ծաղկեփուշի, նեկտար և շուր:

Մեղվի ընտանիքում, տարվա որոշ ժամանակամիջոցում հայտնվում են մի քանի հարյուր բուսեր (արուներ), որոնք ընտանիքում կտաարում են միմիայն մեկ օգտակար աշխատանք. դա երիտասարդ մայրերի զուգավորելն է (ռեղմնավորում):

Բուսերի կյանքը շատ կարճ է, որովհետև նորմալ ընտանիքներում գլխավոր մեղրաբերքը վերջանալուց անմիջապես հետո աշխատավոր մեղուները բուսերին ամբողջությամբ ոչնչացնում են:

Աշնան և ձմռան ամիսներին բուսեր կարող են լինել միմիայն աննորմալ ընտանիքներում, այսինքն այն ընտանիքներում, որտեղ չկա մայր: Կամ թե ընտանիքն ունի չզուգավորված (բեղմնավորված) մայր: Այսինքն դեռ բջիջներում ձու չի դրել:


Մայր մեղվի դրած ձվերը բջիջներում 3 օրից հետո դառնում են փոքրիկ թրթուրներ (որդեր) և այդ վիճակում մնում են 6 օր, ահա այդ ժամանակամիջոցում նրանց անհրաժեշտ է մեծ քանակությամբ կեր, լավ խնամք և ջերմություն: Ձու գնելու օրից, հաշված 9-րդ օրը, թրթուրները ձևափոխվում են հարսնյակների (կրնքված կամ փակ որդեր), որոնք 12 օր փակված վիճակում մնալով, բջիջների մեջ զարգանում և դուրս են գալիս որպես աշխատավոր մեղուներ:



Նկ. 2

Մեղվի զարգացման ստադիաները. 1—3— ձվիկներ, 4—9— թրթուրներ, 10—11— կրնքված թրթուրներ և հարսնյակներ:

Այդ 12 օրվա ընթացքում, բայցի համապատասխան ջերմոթյունից (34—36°) ըստ Ց-ի, հարսնյակներին ուրիշ ոչ մի խնամք հարկավոր չէ:



Նկ. 3


Մեղմի փեթակը

Գարնանը, երբ դրսում ստվերի տակ ջերմաստիճանը բարձրանում է 10—13°-ի ըստ Ց-ի, պետք է ընտրել մի արևոտ օր և առավոտյան վաղ մեղմի փեթակները ձմեռանոցից (աչն շենքը, որտեղ մեղմի փեթակները ձմեռվա ցրտից պահպանվել էին մինչև դարուն) մեկ-մեկ դնել պատգարակների վրա և հանգիստ վիճակով տեղափոխել ու դնել նրանց համար նախօրոք պատրաստված տեղում (մեղմանոցում):

Մեղմանոցի տեղը պետք է լինի չոր, պաշտպանված քամիներից ու ալմուխից, հեռու լճերից, գետերից, գլխավոր ճանապարհներից, ճահճներից և պաշտպանված երկարատև շոգերից:

Մեղմի փեթակները մեղմանոցում պետք է դասավորել շախմատաձև, շարքերում մի փեթակը մյուսից պետք է 1,5—2 մետր հեռավորության վրա գտնվի, իսկ շարքերը պետք է դասավորել ի-

ցարից 2—2,5 մետր հեռավորության վրա: Մեղվի փեթակները մեղվաճանուցում դասավորելուց հետո, անհրաժեշտ է բաց անել նրանց արկանուցները (բերանները), որպեսզի մեղուները դուրս գան փեթակներից:




Նկ. 4

Փեթակների դասավորումը

Մեղուներն այնքան մաքրասեր են, որ ամբողջ ձմեռը դուրս չընդալով փեթակից, չեն էլ արտաթորում փեթակի ներսում, մեղրահացերի վրա, այլ նրանք իրենց կղկղանքը պահում և կուտակում են իրենց փորիկում (վերջնաղիքում) մինչև գարնան բացվելը: Միայն վաղ գարնանը, երբ փեթակները ձմեռանուցից դուրս են հանում, նրանք իրենց առաջին թռիչքի ժամանակ փեթակից հեռու դատարկում են իրենց փորիկում հավաքված կղկղանքը:


Մեղվի փեթակները ձմեռանուցից դուրս գնելու առաջին իսկ օրը մեղվաճանուցում պետք է անցկացնել թուլցիկ ստուգում, որի նպատակը պետք է լինի հաշտարերի բոլորովին հանգած, անմայր և պաշարազուրկ բնառանձիկներ, աչքախախներ լինելու դեպքում, ցույց տալ տուաչին օգնությունը, աչք է՝ հանգածներին անմիջապես վերցնել մեղվաճանուցից և տաճիկ ներս: Մայր շունեցուղ բնառանձիկներ տալ մայր, իսկ պաշար շունեցուղներին՝ պահեստից կամ հարևան բնառանձիկից տալ շրջանակով մեղր: Մեղր չլինելու դեպքում, անմիջապես պատրաստել շաքարաջուր (2 կիլոգրամ շաքար և մեկ կիլոգրամ ջուր եփել) և 25—30՝ տաք վիճակում կերակրել պաշարազուրկ բնառանձիկներին:

Մաքրման թռչնից 2 օր հետո պետք է մարրել փեխակները հատակները, քերել և հալաքել փեխակներում և շրջանակների վրա դանված մոմը: Հատակների մաքրման աշխատանքները վերջացնելուց հետո, օրվա տաք եղանակին պետք է կատարել ընտանիքներին առաջին, զրիավոր ստուգումը:



Նկ. 5

Մալրատուկ



Նկ. 6

Մալրավանդակ

1. Անմայր կամ դեֆեկտավոր մայր ունեցող ընտանիքին տալ նուկլեոտներից պոֆենտի դուպլոլորված (բեզմնավորված) մայր-ալոպիսի չլինելու դեպքում անմայր ընտանիքը միացնել իր հարեան՝ մայր ունեցող ընտանիքին, իսկ դեֆեկտավոր մորը թողնել որոշ ժամաճափ, մինչև ընտանիքում հաստատվեն բոռի թրթուրներ. ալո ժամաճափ ալոպիսի ընտանիքների մայրերին ոչնչացնել և նրանց տալ հաստունացած մայրապտուկներ:


2. Պաշարազուրկ ընտանիքներին տալ լրացուցիչ կեր այն հաշվով, որ նորմալ ընտանիքը պարնանն ունենա 10—12 կգ մեկը: Կերով ապահովված ընտանիքներն անբարենպաստ եղանակներին և թույլ բերքի ժամանակ ավելի լավ կրազմանան և 70—80%-ով ավելի շատ նեկտար և ծաղկեփոշի կհավաքեն, բան պաշարազուրկ ընտանիքները: Կերի պակասը պետք է լրացնել շրջանակավոր հաց մեղրով, ալոպիսին չլինելու դեպքում ծոր մեղրով կամ շաքարաջրով:

3. Մեղվի ընտանիքների աճեցման և բազմացման համար անհրաժեշտ է նաև ջերմություն (ընտանիքի բնում պետք է լինի 35—36° ջերմություն): Մեղվի ընտանիքներում եղած ջերմությունը պահպանելու համար, նրանցում եղած բոլոր ավելորդ մեղրահացերը, որոնք ծածկված չեն մեղուներով, պետք է հանել, բները պատվորել փեթակների կենտրոնում և երկու կողքերից ու վրայից դնել դարմանով (հարգով) լցված բարձիկներ:

Բների ալոպիսի պատվորումն օժանդակում է ընտանիքների աճեցմանը, ալսինքն բարձրացնում է մայր մեղվի ձվադրման քանակը՝ թույլ ընտանիքներում 80%-ով, միջակ ընտանիքներում՝ 50%-ով, իսկ ուժեղ ընտանիքներում 20%-ով:

4. Մեղվի ընտանիքը պարնանը պետք է ուժեղ լինի, ալսինքն պետք է ունենա 6—10 շրջանակ մեղրահացեր, որոնք խիտ առ խիտ ծածկված պետք է լինեն մեղուներով, որպեսզի ընտանիքը հնարավորություն ունենա պարնանը արագ աճելու, բազմանալու և մեծ քանակությամբ աշխատավոր մեղուներով դիմավորելու գլխավոր մեղրաբերքին ու լիառատ կերպով օգտվելու նրանից, հավաքելով մեծ քանակությամբ մեղր:

Դրանից պակաս մեղու լինելու դեպքում, անհրաժեշտ է պարնանը ալոպիսի ընտանիքներին հարեան փեթակներից օդնել որպես ուժեղություն, որպեսզի նրանք էլ ուժեղանան և հասնեն նորմալ ընտանիքներին:



Նկ. 7

Բունը խռայրած ընտանիք

Վերև հիշված աշխատանքները կատարելուց հետո, երբ ծառերը կծաղկեն ու գաշտի ծաղիկները կբացվեն, մեղուները գաշտից փնթակ կբերեն առատ ծաղկեփռերի և նեկտար։ Մեղվի ընտանիքը կբազմանա և կլցնի բնում եղած բոլոր մեղրահացերը։ Այդ ժամանակ պետք է լաչնացնել մեղվի ընտանիքների բները։

Նախ, բնի լաչնացումը պետք է կատարել ի հաշիվ պահեստում եղած պատրաստի դատարկ մեղրահացերի (չեշերի)։ Մեղրահացերը պետք է դնել բնի կողքերից, միանգամայն արգելվում է դատարկ մեղրահացը բնի կենտրոնում դնելը։


Երբ սկսվի օժանդակ մեղրորերը և մեղուները մոմ արտադրեն, այդ ժամանակ մեղվի ընտանիքների բունը լաչնացնելու նրպատակով կարելի է օգտագործել մոմաթերթ, որը նույնպես պետք է դնել բնի կողքերից։

Երբ մեղվի ընտանիքի բունն ամբողջությամբ ցլվի 12—13 շրջանակ ձվերով, թրթուրներով, հարսնյակներով (որդ ու ձվերով) և մեղրով, այդ ժամանակ անհրաժեշտ է մեղվի ընտանիքների բունը ավելի լաչնացնել և տալ նրանց էլ ավելի բազմախառն հնարա-

վորութիւնն: Բնի վրա պետք է դնել երկրորդ հարկը (վերնահարկ: կամ կորպուս): Լավ կլինի, որ վերնահարկում կամ կորպուսում գրվեն պատրաստի մեղրահացեր (չէշեր), որոնց շնորհիվ կստացվի շատ բերք. այդպիսին չլինելու դեպքում միայն պետք է տալ մոմայկերթ:

Մեղրը պետք է քամել գլխավոր մեղրաբերքի ընթացքում, այն ժամանակ, երբ վերնահարկի կամ կորպուսի շրջանակները ³/₄ մասով լցված կլինեն մեղրով և $\frac{1}{3}$ մասով սերեկած են (մեղրի սերեկել նշանակում է, որ մեղրը վերամշակված է և հասունացած):

Մեղրը քամում են մեղրաքամ մեքենայով (տես նկար № 8):



Նկ. 8


Մեղրաքամ մեքենա

Մեղրը քամելուց առաջ անհրաժեշտ է հատուկ սուր դանակով վերցնել մեղրահացերի բջիջների մեջ լցված մեղրի վրայի սերեկը երկու կողմերից, ապա դնել մեղրաքամ մեքենայի մեջ և պտտեցնել 5 րոպե, ապա հանել մեղրահացերը, շուտ տալ հակառակ կողմը և նորից 5 րոպե պտտեցնել, սրից հետո մեղրաքամ մեքենայից հանել դատարկ մեղրահացերը և տեղը դնել ուրիշները:

Նորմալ տարիներին մեղրաքամը չպետք է թողնել մինչև գլխավոր մեղրաբերքի վերջանալը, եթե բերքը վերջանա մեղվի ընտանիքներից մեկը հանելը շատ դժվար կլինի, որովհետև դաշտում ծաղիկները չորանում են, մեղուները դաշտ չեն գնա և կհարձակվեն


այն ընտանիքների վրա, որոնց բաց էք արել և ուզում էք նրանցից մեղր հանել:

Մեղուների իրար վրա հարձակվելու և գողությունից խուսափելու համար, անհրաժեշտ է գլխավոր մեղրաբերքից հետո միշտ մեղվի ընտանիքները ստուգելն, անհրաժեշտության դեպքում նաև մեղրաքամը կատարել երկիոյան, երբ արդեն արևը մայր է մտնել:



Նկ. 9

Վերևում՝ Վուարլեյի գործիքը
խողանակ, դանակ, բերիչ



Նկ. 10

Մխարա

Գլխավոր մեղրաբերքը վերջանալուց անմիջապես հետո, անհրաժեշտ է մեղվանոցում անցկացնել ընդհանուր ստուգում, որի նպատակն է կատարել հետեւյալ աշխատանքները:



Նկ. 11
Երեսի բող

1. Վերցնել կորպուսներն ու վերնահարկերը:

2. Որպես կանոն մեղվի բնատանիքներն աշնանը պետք է ունենան 18—20 կգ մեղր և ծաղկեփուշի, որպես ձմեռվա պաշար, որից պակաս լինելու դեպքում պետք է տալ պահեստից կամ հարևան ընտանիքներից մեղրով լցված մեղրահաց. վերջինս չլինելու դեպքում կերակրել ծոր մեղրով կամ շաքարաջրով: Շաքարաջուրը, որպես ձմեռվա կեր, աշնանը պետք է պատրաստել հետեւյալ ձևով— երկու կիլոգրամ շաքարի հետ խառնել մեկ կիլոգրամ ջուր և մեկ գրամ լիմոնի թթու (լիմոնի աղ), լավ եփել և կերակրել պաշարավորի ընտանիքներին մեծ բաժիններով՝ օրական 2—3 կգ-ի սահմաններում, որպեսզի նրանք մեր տվածը տանեն և վերամշակեն, կուտակեն որպես ձմեռվա կեր: Կիրը ջրալի և քիչ լինելու դեպքում, ալյուրիսին մեղուները կօգտագործեն որպես գրգռիչ կեր իրենց բազմացման համար:

3. Մեղվի բնատանիքի բնից պետք է հանել բոլոր ավելորդ մեղրահացերը, որոնց վրա մեղուները չեն նստած. կողքից զննել միջնատախտակ և ընտանիքների երկու կողքերից և վրալից զննել դարմանով լցրած բարձրիկներով տաքացումներ (ինչպես արել էինք դարձանը):

4. Մալր չունեցող բնտանիքներին անհրաժեշտ է տալ պահեստի զուգավորված (բեղմնավորված) մալրեր, վերջինս չլինելու դեպքում միացնել մալր ունեցող հարեան բնտանիքի հետ:

5. Փոքրացնել փեթակների արկանոցներն այն հաշվով, որ երկու մեզու իրար կողք-կողքի հազիվ կարողանան ներս ու գուրս անել:

6. Մեծիկ փեթակների վրա գտնվող բոլոր ձեղքերը և անցքերը, վերը նշված աշխատանքները կատարելուց հետո պետք է սպասել, մինչև մեզվի բնտանիքների ձմեռանոց տեղափոխելը:

Լեռնային և նախալեռնային շրջաններում մեզվի բոլոր բնտանիքներն աշնանը (սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին) պետք է ունենան առնվազն 8 շրջանակ՝ խիտ առ խիտ պատուղ մեզու, իսկ դաշտային շրջաններում առնվազն 6 շրջանակ պատուղ մեզու, որից պակաս լինելու դեպքում անհրաժեշտ է հարեան բնտանիքներից օգնել նրանց սղոցելով ու ձվելով, հարկ եղած դեպքում նաև մեզուներով:

7. Յուրաքանչյուր մեզվանոց ձմեռանոց պետք է պնել ձմեռոց բնտանիքների քանակի առնվազն 15%-ի չափով նուկլիտաներ, պահեստի զուգավորված (բեղմնավորված) մալրերով (գարնանը անմալր, գեֆեկտավոր մալրեր ունեցող բնտանիքներին մալրերով ապահովելու համար):

Այն շենքերը, որտեղ ձմեռելու են մեզվի բնտանիքները, նախապես պետք է հարմարեցնել ձմեռանոցի նորմալ պահանջներին: Շենքը պետք է լինի բացարձակապես մութ, չոր, ազմուկից հեռու, տանիքը սվաղված, օդափոխությունը հարմարեցված, ներսը մաքրված և հարեան շենքերի ծխերից պաշտպանված:


Ձմեռանոցում պետք է պահպանել $+ 4 - + 6^{\circ}$ ջերմությունը 3-ի. բարձր կամ ցածր լինելու դեպքում, պետք է կարգավորել օդափոխությունը՝ անցքերը բացելով կամ փակելով: Ձմեռանոցում կերտոխնկա կամ վառարան վառել արգելվում է:

Մեղուները պետք է տեղափոխել ձմեռանոցի շենքը պատգարակներով, հանդիստ վիճակում: Փեթակները ձմեռանոցում պետք է դարձել իրար վրա 3 հատ և շարքերն իրարից պետք է լինեն մոտ մեկ մետր հեռավորություն վրա, որպեսզի հնարավոր լինի շարքերի տրանքով անց ու դարձ անել և մեղուների ձմեռվա հանդիստն առուզել ըստ առանձին-առանձին բնտանիքների:

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՇԱՏ ՄԵՂԻ ՈՒ ՄՈՄ

Մեղվի բնտանիքներից բարձր բերք ստանալու համար վերը նշված խնամքից բացի պետք է կատարել նաև հետևյալ աշխատանքները՝

1. Ուրպիսզի կարողանալ նպատակահարմար ձևով օգտագործել մեղվի բնտանիքում եղած մեղուներին և բնի ներսում քիչ մեղուներով պահպանել նորմալ ջերմություն, անհրաժեշտ է մեղվի բնտանիքները ձմեռանոցից դուրս դնելուց առաջապես հետո փեթակում եղած շրջանակները պեղ իրար շատ մոտիկ 8,5 մմ հեռավորության վրա, սովորական 12—13 մմ-ի ֆոխարեն։ Այսպիսով մայր մեղուն աղելի շատ ձվեր կդնի (այս նպատակի համար կան պատրաստված հատուկ բաժանարարներ), որի շնորհիվ կբարձրանա մեղվի բնտանիքի զարգացումը և բազմացման ընթացքը։



Նկ. 12

1—նոր (8,5 միլիմետրանոց), 2— հին (13 միլիմետրանոց) բաժանարարներ

2. Փարնան ամիսներին մեղուների զարգացման ընթացքն էլ աղելի արագացնելու համար, մեղվի բնտանիքները ձմեռանոցից դուրս դնելուց 2—6 օր հետո, անհրաժեշտ է մեղվի փեթակի ներ-

սում դնել արհեստական տարացումներ. ալյ նպատակով կարելի է օգտագործել թիթեղյա հատուկ ապարատներ (որի ծավալն է հաստությունը 25 մմ, երկարությունը 380 մմ, իսկ լայնությունը 270 մմ), որոնք տեղավորում ենք քնտանիքի կողքերին գրված տարացման բարձիկների մեջտեղը և բոլոր կողմերից լցնում ենք 3—6 սմ հաստությամբ դարման, բամբակ և այլն:



Նկ. 13

Թիթեղից տարացման սպարատ

Ապարատի ցածի անցքին ամրացված ուտինե խողովակի ծայքը պետք է դուրս հանել փեթակի կողքերի վրա ելած անցքերից և նրա ծայրին ամրացնել արգելակ: Ամեն երեկո ալյ ապարատների մեջ պետք է լցնել տաք (80—100°) ջուր, որն ապարատների մեջ տաք վիճակում կմնա մինչև հաջորդ առավոտ: Հաջորդ օրը վաղ առավոտյան առանց փեթակը բացելու, հանում ենք ուտինե խողովակին ամրացված արգելակը և ջուրը թափում. երեկոյան, առանց փեթակը բացելու, միևնույն խողովակից լցնում ենք տաք


19389



Նկ. 11

Առանց փխրիկ թանաքի տար. լցման աղտոտանելի ծեծ ստեր չորս լցնելու պրապեր

ջուրը և արդեւաւոր փափում: Այսպէս շարունակ մինչև եղանակների տաքանալը: Կարելի է թիթեղյա ստարատներն փոխարեն օգտագործել զանազան մեծութեան շշեր, սրտնք երեկոները լցնում ենք սաք ջրով և տեղաւորում փեթակի ներսում եղած տաքացման բարձիկների մէջ:




Նկ. 15

Տաքացումները շշերով

Այս երկու միջոցառումների շնորհիվ կարճ ժամանակից հետո մեղվի ընտանիքներն աճում, բազմանում և հասնում են մեծ ուժի:

3. Որպեսզի ընտանիքում եղած բոլոր երիտասարդ մեղունքներն ապահովենք աշխատանքով, անհրաժեշտ է այդ մեղունքներին տալ ձվեր— թրթուրների խնամելու, կերակրելու աշխատանք: Իրա համար այդ ընտանիքներին պետք է տալ մի ուրիշ օժանդակ մայր, բայց որովհետեւ երկու մայր մի ընտանիքում չեն կարող ապրել, դրա համար մեղվի ընտանիքները հաւատար կիսում և տալիս ենք բեղմնավորված մայր աջն կեսին, որը մայր չունի:

Այս երեք միջոցառումները կատարելուց հետո մեզ վի ընտանիքները չկրողմանան, կուժեղանան և գլխավոր մեղրաբերքին մի քանի անգամ ավելի բերր կտան, քան սովորական ձևով խնամվող ընտանիքները:



Նկ. 16

Արեկ մոմահալ

4. Հաշտտանի բնական պայմաններն ունեն մի շարք առավելություններ. դրանցից մեկը մեղվի ընտանիքների բուշվորությունն է՝ աշխինքն դաշտային շրջաններից կարելի է մեղվի ընտանիքները տեղափոխել կիսադաշտային կամ լեռնային շրջանները, կամ թե չլեռնային շրջաններից տեղափոխել բամբակացան շրջանները, բամբակի ծաղկի բերքից օգտվելու համար:

Մեղվի ընտանիքների քոչվորությունը հաջող կազմակերպելու դեպքում կրարծրանա մեղվի ընտանիքների բաղմացման շրջանը, որի շնորհիվ նաև բերքաավելությունը:

Անասնապահական փորձակայանի մեղվանոցում կիսման և ղանակով բաղմացվող ընտանիքներից միջին հաշվով ստացվեց՝

1939 թ. 4 մեղվի ընտանիքից միջին հաշվով 242,25 կգ համախառն մեղր, 7,5 կգ մոմ:

1940 թ. 10 մեղվի ընտանիքներից — միջին հաշվով 302,9 կգ համախառն մեղր, 11,15 կգ մոմ, իսկ նույն փորձախմբի մի ռեկորդային ընտանիքից ստացվեց 403 կգ համախառն մեղր, 14 կգ մոմ:

Մասնատման եղանակով բաղմացված ընտանիքներից ստացվեց հետևյալ արդյունքը.

1939 թ. 4 մեղվի ընտանիքից միջին հաշվով ստացվեց 110 կգ համախառն մեղր, 2,2 կգ մոմ:

1940 թ. 10 մեղվի ընտանիքներից միջին հաշվով ստացվեց 120 կգ համախառն մեղր 2,4 կգ մոմ:

1940 թ. Երևանի Սպանդարյան շրջանի «Կարմիր Բանակի» անվան կուլտնտեսության մեղվապահ մեղվապահ Պետրոս Կարապետյանը կիրառելով վերը նշված մեթոդը կուլտնտեսության մեղվի 6 ընտանիքներից ստացավ 240 կգ համախառն մեղր, 6 կգ մոմ և 600% աճ:

Ապարանի Գյուլիշա գյուղի «Անինի» անվան կուլտնտեսության մեղվապահ՝ Մացո Եղիազարյանը 5 մեղվի ընտանիքներից միջին հաշվով ստացել է 180 կգ համախառն մեղր, 4,8 կգ մոմ և 650% աճ:

Էջմիածնի շրջանի Էջմիածին քաղաքի Միկոյանի անվան կուլտնտեսության մեղվապահ՝ Զարեկ Բզնունին կուլտնտեսության 10 մեղվի ընտանիքներից միջին հաշվով ստացել է 158,3 կգ համախառն մեղր, 6,3 կգ մոմ և 600% աճ:

Կոտայքի շրջանի Հրազդան գյուղի Կիրովի անվան կուլտնտեսության մեղվապահ՝ Հարեն Բաղալյանը շրջ. հողբաժնի մեղվաբուծ-գոտտեխնիկ Կարապետ Այդինյանի ամֆիշտական մասնակցությամբ և ղեկավարությամբ կուլտնտեսության 20 մեղվի ընտանիքներից միջին հաշվով ստացել է 107 կգ համախառն մեղր, 3,1 կգ մոմ և 500% աճ:

Մարտունու շրջանի վաղաշեն գյուղի վերաշինվողի անվան կու-
տակոսություն մեղվապահ Ա. Սավարյանը կուտակություն 8 մեղ-
վի ընտանիքներից միջին հաշվով ստացել է 99 կգ համախառն
մեղր, 2,53 կգ մոմ և 350% աճ:

ԻՆՉՊԵՍ ԱՏԱՆԱԼ ՇԱՏ ՄՈՄ

ԿԱԽՈՒՅՈՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Օժանդակ մեղրաբերքն սկսելուն պես մեղվի բնատանիքի բնի
կողքերից մեղրով մեղրահացերը հեռացնում ենք և ստեղծում ա-
զատ տարածություն, որը ու ձվով մեղրահացերի և կողքի մեղրով
մեղրահացի միջև: Այդ ազատ տարածության մեջ դնում ենք բուր-
րովին դատարկ շրջանակ, առանց մոմաթերթի կամ այդ դատարկ
շրջանակի վերին ձողին կպցնում ենք մոմաթերթի նեղ շերտ:

Մեղուներն անմիջապես սկսում են այդ դատարկ շրջանակների
մեջ դործել մեղրահացեր (զալազ) և ամեն 2—3 օրը մեկ անգամ
այդ նոր դործած մեղրահացերը (զալազը) կտրում որպես մոմ, իսկ
դատարկ շրջանակը նորից դնում իր տեղը, ախպես շարունակ
մինչև գլխավոր մեղրաբերքի սկսվելը:

Այս եղանակով կստացվի մի քանի անգամ ավելի շատ մոմ,
քան սովորական ընտանիքներից է ստացվում:

ՄԵԴՐԱՀԱՅՆՐ (ՉԵՉՆՐ) ԴՈՐԾԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Օժանդակ մեղրաբերքը սկսելուն պես, երբեմն նույնիսկ դրա-
նից շուտ (մեղուներին տալիս ենք գրգռիչ կեր, որպես օժանդակ
բերք), մեղվի ընտանիքի բնի մեկ կամ երկու կողքից մեղրով շրջա-
նակները հեռացնում ենք բնի որդ ու ձվով շրջանակներից և ազատ
տարածություն ստեղծում և այդ տարածության մեջ դնում ենք շրջ-
ջանակներին կպցրած արհեստական մոմաթերթեր:

Մեղուներն անմիջապես սկսեն մեր տված արհեստական մո-
մաթերթերը վերակառուցել և դարձնել մեղրահացեր: Հաջորդ օրն
այդ դործած մեղրահացերը հանում և փոխարենը տալիս ենք նոր
մոմաթերթեր և այսպես շարունակ, մինչև գլխավոր մեղրաբերքի
սկսվելը: Մեղուներն ամեն մի մեղրահաց կառուցելուց, մեր տված

1939 թ. 4 մեղվի ընտանիքից միջին հաշվով 242,25 կգ համախառն մեղր, 7,5 կգ մոմ:

1940 թ. 10 մեղվի ընտանիքներից — միջին հաշվով 302,9 կգ համախառն մեղր, 11,15 կգ մոմ, իսկ նույն ժողովրդավարական միության կողմից ընտանիքից ստացվեց 403 կգ համախառն մեղր, 14 կգ մոմ:

Մասնատման եղանակով բազմացված ընտանիքներից ստացվեց հետևյալ արդյունքը.

1939 թ. 4 մեղվի ընտանիքից միջին հաշվով ստացվեց 110 կգ համախառն մեղր, 2,2 կգ մոմ:

1940 թ. 10 մեղվի ընտանիքներից միջին հաշվով ստացվեց 120 կգ համախառն մեղր 2,4 կգ մոմ:

1940 թ. Երևանի Սպանդարյան շրջանի «Կարմիր Բանակի» անվան կոլտնտեսության մեղվապահի մեղվապահ Պետրոս Կարապետյանը կիրառելով վերը նշված մեթոդը կոլտնտեսության մեղվի 6 ընտանիքներից ստացավ 240 կգ համախառն մեղր, 6 կգ մոմ և 600% աճ:

Ապարանի Գյուլիջա գյուղի «Լենինի» անվան կոլտնտեսության մեղվապահ Մադո Եղիազարյանը 5 մեղվի ընտանիքներից միջին հաշվով ստացել է 180 կգ համախառն մեղր, 4,8 կգ մոմ և 650% աճ:

Էջմիածնի շրջանի Էջմիածին բաղաբի Սիկոյանի անվան կոլտնտեսության մեղվապահ Զարեկ Բզնունին կոլտնտեսության 10 մեղվի ընտանիքներից միջին հաշվով ստացել է 158,3 կգ համախառն մեղր, 6,3 կգ մոմ և 600% աճ:

Կոտայքի շրջանի Հրազդան գյուղի Կիրովի անվան կոլտնտեսության մեղվապահ Հարևի Բաղդասարյանը շրջ. հողրածնի մեղվաբուծ-գոտեխնիկ Կարապետ Ալդինյանի անմիջական մասնակցությամբ և ղեկավարությամբ կոլտնտեսության 20 մեղվի ընտանիքներից միջին հաշվով ստացել է 107 կգ համախառն մեղր, 3,1 կգ մոմ և 500% աճ:

Մարտունու շրջանի վաղաշեն գյուղի Վարդիլովի անվան կոլ-տնտեսությունը մեղվապահ՝ Ա. Սավարյանը կոլտնտեսությունը 8 մեղ-վի ընտանիքներից միջին հաշվով ստացել է 99 կգ համախառն մեղր, 2,53 կգ մոմ և 350% աճ:

ԻՆՁՊԵՈՍՏԱՆԱԼ ՇԱՏ ՄՈՐ

ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Օժանդակ մեղրաբերքն սկսելուն պես մեղվի ընտանիքի ընդ կողքերից մեկը մեղրահացերը հեռացնում ենք և սահղծում ա-ղատ տարածություն, որդ ու ձվով մեղրահացերի և կողքի մեկը մեղրահացի միջև: Այդ աղատ տարածության մեջ դնում ենք բոլո-րովին դատարկ շրջանակ, առանց մոմաթերթի կամ այդ դատարկ շրջանակի վերին ձողին կալցնում ենք մոմաթերթի նեղ շերտ:

Մեղուներն անմիջապես սկսում են այդ դատարկ շրջանակների մեջ դործել մեղրահացեր (դալաղ) և ամեն 2—3 օրը մեկ անգամ այդ նոր դործած մեղրահացերը (դալաղը) կտրում որպես մոմ, իսկ դատարկ շրջանակը նորից դնում իր տեղը, աչապես շարունակ մինչև գլխավոր մեղրաբերքի սկսվելը:

Այս եղանակով կատարվի մի քանի անգամ ավելի շատ մոմ, քան սովորական ընտանիքներից է ստացվում:

ՄԵԴՐԱՀԱՅՆՐ (ՉԵՉՆՐ) ԳՈՐԾՆԱԿԻ ԵՂԱՆԱԿԸ

Օժանդակ մեղրաբերքը սկսելուն պես, երբեմն նույնիսկ դրո-նից շուտ (մեղուներին տալիս ենք գրգռիչ կեր, որպես օժանդակ բերք), մեղվի ընտանիքի բնի մեկ կամ երկու կողքից մեկը մեղրա-նակները հեռացնում ենք բնի որդ ու ձվով շրջանակներից և աղա-տ տարածություն ստեղծում և այդ տարածության մեջ դնում ենք շր-ջանակներին կապրած արհեստական մոմաթերթեր:

Մեղուներն անմիջապես կսկսեն մեր տված արհեստական մո-մաթերթերը վերահասուցել և դարձնել մեղրահացեր: Հաջորդ օրն այդ դործած մեղրահացերը հանում և փոխարենը տալիս ենք նոր մոմաթերթեր և աչապես շարունակ, մինչև գլխավոր մեղրաբերքի սկսվելը: Մեղուներն ամեն մի մեղրահաց կառուցելուց, մեր տված

սրճեստական մոմտիերիի քաշի վրա ավելանում են 60—70 գրամ մոմ, այս եղանակով մի սեզոնի ընթացքում կարելի է ստանալ ամեն մի ընտանիքից միջին հաշվով 40—50 մեղրահաց, որը հավասար է 2—3 կգ մոմի, բացի դա, խոշոր նշանակություն ունի մյուս ընտանիքներին օժանդակելու գործում: Այսպես օրինակ՝

1. Ռույլ ընտանիքներին պատրաստի մեղրահացերով օգնելու, սովորացնելու նպատակով:

2. Նոր կազմակերպված ձագերին օգնելու, ուժեղացնելու համար:

3. Պատրաստի մեղրահացերը կուտակում ենք պահեստում մինչև դիսավոր մեղրաբերքի սկսելը և այդ պատրաստի մեղրահացերով (չեչերով) ուժեղ ընտանիքների վրա դնում ենք վերահարկեր, որը նույնպես բարձրացնում է ընտանիքների մեղրի բերքատրվությունը:



Պատ. խմբագիր՝ Աստ. Հ ա ռ ո թ յ ու ն յ ա ն
Տեխն. խմբագիր՝ Վ. Դ ա վ թ յ ա ն
Կոնսուլ սրբազրիչ՝ Հ. Ե ն գ ի թ ա ռ յ ա ն

ՎՖ 02832

Պատվեր № 435

Տիրաժ 3.000

Հանձնված է արտադրության 25/V 1949 թ.

Ստորագրված է տպագրության 2/VII 1949 թ.

Տպագրական 1 1/2 մամուլ

Հայկովիդրաֆհրատի վարչության № 2 սպարան, Երևան,

Կոնսյանցի № 86, 1949 թ.

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007960

2 1' 1

A 11
19389